

891.995

15-50



Կ. ՄԵԼԻԲ-ՇՈՂՆԱԶԱՐԵԱՆ



ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Բագուի Հայոց
Հրասարակազան Բնկերութիւն
Հրասարակութիւն № 2

„Б У К Е Т Ъ“
подарокъ для дѣтей
Н. Медикъ-Шахназарянъ.

ՏՊԱՐԱՆ „ՏՐՈՒԳ“
1907 թ.


ТИП. „ТРУДЪ“, БАКУ.

896.995


15-50

48.

2011-07



Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ



ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Բագուի Հայոց
Հրասարակալան Բնկերութիւն
Հրասարակութիւն № 2

„Б У К Е Т Ъ“
подарокъ для дѣтей
К. Меликъ-Шахназарянъ.



ՏՊԱՐԱՆ „ՏՐՈՒՂ“
1907 թ.

ՏԻՍ. „ՏՐՈՒՂ“, ԲԱԿՍ.



ուանը ձեռքին, զնդանն առաջին,
 Քիթ երեսն մրոտ դարբնոցի միջին,
 Կաշուէ գոգնոցը առաջը կապած
 Լուիկ կանգնած է մեր Խաչօ դարբին:

Փուքսը փնէ հա փնէ փշում է փշում,
 Կայծեր ու մոխիր դէս ու դէն սփռում:
 Երկաթի մի շերտ հնոցը կոխած՝
 Սաստիկ տաքիցը կարմրում է, կակղում:

Խաչօն հանում է երկաթի շերտը,
 Զնդանի վրայ կռանում ծեծում,
 Շինում նրանից պայտ, մեխ ու կացին
 Եւ իսկոյն ջրի տաշտակը կոխում:

Թշուամ է երկաթը ցուրտ ջրի միջին,
Ամպի պէս փռում տաք տաք գոլորշին,
Կրկին պնդանում, կրկին փափկանում,
Մինչև որ պատրաստ շաքտում գետին:

Այսպէս ամբողջ օր մեր դարբին Խաչօն,
Կրակի առաջ, այն կեղտ ու մուրում,
Մի կտոր չոր հաց ճարելու համար,
Օրն է բուն գործում է և աշխատում:



Ա Շ Ո Ւ Ղ Ը

Սուրճինն ուսին
Սազը իր ձեռին,
Կանգնած էր աշուղը
Փողոցի միջին:

Խփում էր սազին,
Դողցնում լարեր,
Երգում սազի հետ,
Թւում իր ցաւեր:

Երգն էր սրտառուչ,
Տխուր, վշտալից,
Մի բողոք էր այդ
Դառնացած սրտից:

Բողոք՝ անիրաւ
Ճակատագրի դէմ,
Բողոք՝ աշխարհի
Զրկանքների դէմ...

Երգը վերջացաւ,
Սազը դէն դրեց
Եւ զոյգ կոյր աչքերը
Դէս ու դէն դարձրեց:

«Ողորմեցէք, պարոններ,
Հացի կարօտ աշուղիս,
Ողորմեցէք տիկիններ
Կոյր ու անճար աղքատիս:





ԼՈՒԱՅԱՐԱՐ

Լուսաբացին թիֆլիսում
Մեծ կապոցը ուսին,
Շտապելով գնում էր
Լուսացարար մի հայ կին:

Նա տանում էր հարստի
Կեղտոտ շորեր լուալու,
Նրա կեղտի վճարով
Խղճուկ կեանքը պահելու:

Այդ արհեստը իր համար
Գործ էր դնում այն օրից,
Երբ նա զրկուեց թե թիկունք
Իր մինուճար գաւակից:

Ահա հասաւ իր տունը,
Մեծ կաթսայով ջուր դրեց,
Կրակ վառեց օջախում
Ու կապոցը բաց արեց:

Առաջ քաշեց տաշտակը,
Սապոն, լեղակ պատրաստեց,
Սոթտեց իրեն թերը
Ու լուանալ սկսեց:

Ճլրգդ~պլրգդ, ճլրգդ~պլրգդ,
Նա սապնում է եռանդով,
Կոխում շորը ջրի մէջ,
Ճմուռում, տրորում ձեռներով:

Եռման ջրից քերծում է,
Նրա ձեռքերի կաշին,
Կռանալուց զգում է
Նա սաստիկ ցաւ իր մէջքին:

Բայց նա ցաւին չի նայում,
Ճլրգդ պլրգդ սապնում է,
Մինչև շորի աղտ ու կեղտ
Լուացւում ու մաքրւում է:

Եւ երբ լուացքը մի առ մի
Պարզաջրում է, լեղակում,
Մզում, բակում թառ տալիս,
Ու զիշերով հարթուկում,

Նրա մօտիկ դրացիք
Հանգիստ պառկած անկողնում,
Վաղուց արդէն քնի մէջ
Երբորդ երազն են տեսնում:

Այսպէս խղճուկ այս կիներ
Տարին տասներկու ամիս
Չարչարւում է, լուացք անում,
Ու իր սև օրը անցնում:




ԵՐԿՐԱԳՈՐԾ

I

Արե չծագած՝ մաճն է քո ձեռքիդ,
Եօթ զոյգ եզ գոմէշ լծած գութանիդ,
Ծրում ես, պատռում դու կոշտ ու խոպան,
Լեռներ ու ձորեր, հանդ ու անդառտան:

Ցանում ես ցորեն, կորեկ ու գարի,
Բրինձ ու բամբակ ամենայն տարի,
Ծլում, ծաղկում են ճակտիդ քրտինքով
Քո վարած դաշտը, որ լի էր փշով:



Անցնում է գարուն, ոսկեզօծ հասկեր
 Լցւում, ծածկում են քո սիրուն արտեր,
 Քամին փչում է, արտը տատանում,
 Կարծես նոր հարս է՝ հօրանց է գնում:

II

Հասնում է ամառ, մանգաղը ձեռքիդ,
 Դու հունձ ես անում, խուրձեր կապտում,
 Սայլով ու ձիով կրում ես բերում
 Քրտնքիդ վաստակը կալումդ դիզում:

Հաշան ես անում, կալսում ու քամում,
 Մաքուր ցորենը տանդ ամբարում,
 Իսկ չոր դարմանը՝ ձմեռուայ պաշար
 Անասնոց համար մարագը լցնում:

Եւ երբ փչում է ցրտաշունչ ձմեռ,
 Խրճիթում նստած քո խոփն ես սրում,
 Արօր ու գութան սարքում, պատրաստում
 Ու գարնան գալուն նորից սպասում:



Ա Մ Պ Ե Ր

I



մայեր են գալիս բարձր լեռներից
 Խիստ քամու ձեռից,
 Փախչում գնում են, կարծես խրտնոմ են
 Ծարաւ արտերից:
 «Կացէք, այ ամպեր, ինչո՞ւ էք փախչում,
 Անձրև չէք թափում»,
 Մեր ծարաւ արտեր օրեր են համրում
 Ու ձեզ սպասում:
 Քամի՛, դու քամի՛, խղճա՛ արտերին,
 Թո՛ղ այդ ամպերին
 Կանգնեն ու թափեն անձրևի շիթեր,
 Զրեն մեր արտեր»:

II

Քամին հանդարտեց, մեղմ անձրև թափեց,
 Արտերը ջրեց,
 Արտը բարձրացաւ, ցօղուն արձակեց
 Ու հասկեր բռնեց:

Գիւղացին գնաց, տեսաւ ու խնդաց,
 Խնդաց ու ասաց,
 «Փառք քեզ, ով Աստուած,
 Որ տուիր մեզ հաց,
 Չթողիր քաղցած»




ՀԱՍԿԵՐ

 արնան սկզբին գութան ձգեցին,
 Խոպան դաշտերի սիրտը պատռեցին,
 Աշունը եկաւ, լծեցին արօր,
 Գութանած ցելը նորից շուռ տուին»

Հողը փխրացաւ, ցորեն ցանեցին,
 Յորեն ցանեցին, հողին պահ տուին,
 Ծիլ տուեց ցորենը, ցօղուն արձակեց,
 Ամառամիջին հասկեր բռնոտեց»

Կաթնով լցուեցին հասկի հատիկներ,
 Ոսկի գոյն առան կանաչ ցօղուններ,
 Հնձուորի պասին, որ հով տայ Աստուած,
 Պաս ծոմ պահեցին գիւղի պառաւներ»

Եւ ահա հասաւ ժամը ցանկալի,
 Պտուղ քաղելու դառն քրտնքի,
 Գիւղի հնձուորը արտը դուրս եկաւ,
 Արդար վաստակը արտից տուն բերաւ»





ԱՅԳԵՊԱՆ

յն ո՞վ է զարթնում արև
ծագելիս,
Բահ թիակ ուսին այգին
շտապում.

Այն ո՞վ է արևը մայր մտնելիս,
Յոգնած, վաստակած իր տունը դառնում:

Այգեպանն է այն, որ գլուխը կախ
Փորում է այգին, հանում ժանգալներ,
Ամեն մի ծառի չորս կողմ պտտելով,
Մի մի հաւաքում որդներ, բղէզներ:

Նա է աղբ ածում ծառերի տակը,
Ու ժառանգում հողը պարարտացնում,
Ծառի չոր ճղներ, աւելորդ շիւղեր
Նա է հատոցով կտրում, հեռացնում:

Նա է ջուր տալիս ծառաւ ծառերին,
Ցրտից ու քամուց պահում, պահպանում,
Պտղով ծանրացած ճղների տակը
Նա է խնամքով խեչակներ դնում:

Եւ երբ ծառերը պոկում են ծաղկում,
Ծաղիկը թափում, պտուղով բեռնում,
Կեռասն ու բալը կարմրին տալիս,
Դամբուլն ու ծիրան հասնում, շողշողում,
Խնձորն ու տանձը ճուղլանք եղած՝
Մարդու ախորժակն են գոգում.
Երբ պտուղները չար աչքից պրծած
Մեր այգեպանի քաղլակն են մտնում,
Միայն այդ օրն է նա բնում հանգիստ
Եւ իր ցաւերը իսպառ մոռանում:




ԿՈՎԵՐՆ ՈՒ ՀՈՐԹԵՐԸ

I



րիկնադէմին նոր ծնած կովեր
Արօտից գալով գիւղամէջ հասան,
Ու բառանչելով առանց նայելու
Տիրոջ սրահում հազիւ շունչ առան:



Այդտեղ ցցերից կապուած հորթուկներ
Իրենց մայրերի բառաչը լսելով,
Քաշքշում էին վզի պարաններ,
Որ կտրեն գնան տրանգի տալով,
Առնեն կարօտը իրենց մայրերի,
Ծծեն անուշ կաթ նրանց կրծերի:

Բայց չուանների կապը չէր թողնում,
Շատ քաշկռտուելուց վրդերն էր խեղդում:
Մայր կովիկները այդ բանը տեսած՝
Աղաչ-պաղատով առաջ վազեցին,
Լիզելով նրանց դնչիկն ու մազեր
Իրենց կրծերը նրանց դէմ արին:

II

Հորթուկներն ուրախ չոքէչոք գալով
Իրենց մայրերի կաթնով լի ծծեր
Մուշ մուշ անելով բերաններն առած
Հազիւ սկսան կաթնի համն առնել,
Որ հարայ տալով հարս ու աղջիկներ
Վրայ վազեցին ու խեղճ հորթերի
Դնչին խփելով մօրից բաժնեցին:
«Ա՛յ անտէր մնաք, ձեզ ի՞նչ է եկել,
Այդպէս որ ծծէք, էլ բան կմնայ,
Էլ մեր հոտաղին վաղը ինչ տանենք,
Չէ որ մաճնից զատ ուրիշ բան չկայ»:
Ու այս ասելով ծնկներում բռնած
Կաւէ, պղնձէ մաքուր կովկիթներ,
Խրժ-բրժ անելով սկսան կիթել
Ու ամանները կաթնով լցնել:



Երբ որ կթեցին, էլ բան չը թողին,
 Նորից հորթերին կապից բաց արին.
 Այդտեղ ազատուած մայր ու զաւակներ
 Հազիւ թէ իրենց կարօտը առին:



ՇԵՐԱՄԻ ՈՐԴԸ

I

Աշխարհում պէսպէս ճիճուններ շատ կան,
 Նախշուն, պսպղուն ու հազար տեսակ,
 Դրանցից շատը պատիժ է մարդկանց,
 Օգուտ տուողներ քչերն են միայն:

Մենք խնամում ենք, պահում պահպանում
 Մետաքսը շինող շերամի որդին,
 Որի մի ամսուայ կեանքը աշխարհում
 Մարդկութեան համար ունայն չէ անցնում:

II

Գարնան սկզբին, հէնց որ թթենիք
 Բացում են իրենց տերևներ մանրիկ,
 Շերամի ձուկից ելնում է մի որդ,
 Մի որդ աննշան, սևագոյն, փոքրիկ:

Նայում ես նրան ու չես հաւատում,
 Որ նա էլ ունի ոտներ ու բերան,
 Նա էլ է ուզում աշխարհում ապրել,
 Կեանքի քաղցր ու դառն օրերը տեսնել:

Եւ անա ընկած տերևի վրայ,
 Ուտում է խժռում գիշեր ու ցերեկ,
 Զորս անգամ թմրում, իր մորթը փոխում,
 Երսուն օրուայ մէջ ձգւում, մեծանում:

Երեսուն օր անց նա էլ չի ուտում,
 Շուռ մուռ է գալիս մի անկիւն գտնում,
 Կերած տերևի ամբարած հիւթը
 Բարակ թելի պէս բերանից հանում:

Երեք օր գիշեր նա այդ թելերից
 Գործում է իրեն մի ամուր տնակ,

Փակւում նրա մէջ, թմրում ու քնում,
Տասնութ օրից յետ թիթեռի փոխուած՝
Բերնի շողինքով տնակը ծակում
Ճերմակ թևերով լոյս աշխարհ թռչում:
Եւ այդ թիթեռը երեք օրուայ մէջ
Հազարից աւել ձուաներ թողած՝
Ընկնում է անշունչ, մեռնում ու կորչում՝
Իրեն երկրաւոր պարտքը կատարած:

III

Իսկ ի՞նչ են լինում որդնի տնակներ,
Ճերմակ ու դեղին սիրուն բոժոժներ:
Այդ բոժոժները մարդիկ տաք ջրում
Փափկացնում են, թելի ծայր գտնում,
Ճախարակներով բանում ու մանում
Ու այդ մանածից գործարաններում
Հազար մի տեսակ թէ հաստ թէ բարակ
Մետաքսի ճոթեր գործում, պատրաստում:
Այդ իսկ ճոթերով պճնւում են ճոխ
Մեր հարուստ տիկնայք և օրիորդներ:



Մ Ե Ղ Ո Ւ Ն Ե Ր



արունը եկաւ, օրը տաքացաւ,
Ծառեր, ծաղիկներ բացուեցին սի-
րուն,
Մեղուք դուրս եկան իրենց փեթակից,
Տղզալով թռան միմեանց յետևից:

Ամեն մի ծաղկի վրայ նստելով
Աւետիս տուին գարնան բացուելուն,
Իրենց կնճիթներ ծաղկանօթ կոխած
Ծծեցին միջի հիւթը քաղցրաւուն:

Տղզալով նորից փեթակն են դառնում՝
Ծաղկի նեկտարը քարճիկներ լցրած,
Բերում ու թափում, որ պաշար մնայ
Թէ ձագ մեղուին և թէ ձմեռուայ:

Իսկ փեթակի մէջ մի խումբ մեղուններ
Պարապ չեն նստած՝ բանում են, գործում,
Բճիճներ շինում կամ թէ կարկատում,
Չագեր կերակրում, տունը պահպանում:

Իսկ մայր-թագուհին, ամենից սիրուն,
 Ձուեր է դնում, ձուեր անհամար,
 Որից ելնում են գարնան սկզբին
 Փոքրիկ ձագուկներ մի քանի հազար:

Եւ այդ ամենքը ողջ գարուն ամառ
 Ամբողջ ցերեկներ մեղր են հաւաքում,
 Իսկ մենք այդ մեղրից մի շատ մեծ բաժին
 Կտրում ենք վերցնում մեզ համար պահում:



ԾԻԾԵՌՆԱԿ

Ես եւ Եք արդեօք թէ ինչպէս
 ծիծառը
 Գարունը գալուց՝ հողսերով լցուած
 Վեր վար է թռչում, բնատեղ փնտրում
 Կամ աւեր բունը նորից կարկատում:

Տեսել էք ինչպէս նա տոտիկներում
 Խոտ, դարման բռնած, իսկ իր կտցի մէջ
 Յելի կտորտանք ու ջուրը բերնում
 Կում արած տանում, անդադար կրում,
 Ու այդ ամենը միմեանց կպցնելով
 Ամուր պատ դնում ու բմբուկներով
 Մէջը զարդարում, ձուաներ դնում,
 Երկար թուխս նստում, ձագուկներ հանում...

Տեսել էք արդեօք, ինչպէս նա սիրով
 Խնամք է տանում իր ձագուկներին,
 Քամին փչելիս, անձրև տեղալիս,
 Բազէն ու ցինը գլխին պտտելիս,
 Սրտաճաք եղած, շունչը կտրուած,
 Անգոր ու անմեղ տկոյզ ճտերին
 Պաշտպան է կանգնում թևի տակն առած:

Եւ երբ այդ ճտեր մայրական զթով
 Մնուած, մեծացած, լաւ փետրաւորուած,
 Մայրենի բնին հրաժեշտ տալով
 Հանգն են դուրս թռչում, նոր կեանք սկսում,
 Ինչպէս ճխում է սիրտը ծիծառին,
 Որ իրեն ձագուկը հասաւ այդ օրին...





ՆՈՒՆԷՒ ՓԻՍՈՆ

ունեն ունի մի փիսոյ
Ինքը բրդոտ, հաստ պոչով,
Աչքը ճաղար, դունչը սև,
Մէջքը ճերմակ խալերով:

Կարմիր փողպատ մետաքսէ
Նա կապել է փիսոյին,
Ման է ածում ամեն օր,
Ամուր սղմած իր կրծքին:

Փիսոն չար չէ, երբ նունէն
Սղալում է փայփայում,
Եւ կամ իրեն ամանից
Նրան բաժին է հանում:

Չարածճի այս փիսոն
Շատ է սիրում նունէին,
Լիզում է միշտ ձեռները,
Թռչում, նստում ուսերին:

Երբ որ նունէն տանը չի,
Միան, միան կանչելով,
Ման է գալիս քունջ պուճախ,
Պոչը տնկած վազելով:

Երբ մեծանայ փիսիկը
Ու մեծ կատու նա դառնայ, ,
Վայը կը գայ կը տանի
Տան մէջ եղած մկներին:

Այդ մկները կրծում են
Թէ նունէի խաղալիք,
Պահարանում ամեն ինչ,
Թէ տան շորեր և թէ գիրք:

Այն ժամանակ ամենքը,
Պատիւ կտան փիսոյին,
Որ անխնայ պատժում է
Գող անպիտան մկներին:





ԹԱՄԱՐԻ ՇՆԻԿԸ

մ շնիկը բրդոտ սիրուն,
Ճերմակ նշան ճակատին,
Ամբողջ օրը վազվզում է,
Տատանելով իր ագիկն:

Նա լիզում է իմ ձեռները,
Երկու ոտքի վրայ կանգնում,
Աչքը պլզած իմ աչքերին
Կասես մի բան է խնդրում:

Ես տալիս եմ իմ շնիկին
Հացի պատառ կամ շաքար,
Նա ուտում է մոմռալով
Աչքիս նայում անդադար:

Նա չի սիրում չար տղայոց,
Միշտ հաչում է, յարձակում,
Ու բարկացած ժամանակը
Նրանց փեշը կրծոտում:



Նա բարի է, երբ որ նրան
Սիրում, շոյում են մարդիկ,
Նա քծնում է ու քամւում,
Զի մոռանում երախտիք:

Հաւատարիմ շների մասին
Պատմութիւններ կան գրքում,
Ամենայն օր ես կարդում եմ
Եւ իմ տատիկիս պատմում:



ԳԻՒՂԱՅՈՒ ՎՇՏԵՐԻՑ

Ե Ր Ա Շ Տ

I

 Կապուել է երկինք, անձրև չի գալիս,
Արտերն ու մարգեր ծարաւ են ջրի,
Չորացած գետինը ճեղքեր է կազմել,
Թառամել տերև թուփ ու ծառերի:

Կեանք չի երևում ընդարձակ դաշտում,
Տօթից արևից քաշուել են թռչունք,
Ցամքել են վաղուց գիւղի առուներ,
Բարակել միակ աղբիւրի ակունք:

Ա՛խ Աստուած, անձրև, կանչում են մարդիկ,
Գիշեր ու ցերեկ աղօթք մրմնջում,
Անձրև, տէր Աստուած, խնայիր երկրին,
Մեր արտ ու այգին ձեռից է ընկնում:

II

„

Երկինքը կապուած մնաց շաբաթներ,
Խանձուեցին արտեր, մարգեր չորացան,
Ծառի տերևներ տակից կտրուած՝
Թօշնած թոռոմած գետին թափուեցան:

Աստուած մեզանից երես շուռ տուեց,
Ասացին ծերեր, վայ ու վիշ արին,
Մեր մեղաց համար մեզ պատիժ տուեց,
Մենք ինչպէ՞ս ապրենք, վայ մեր սև օրին:



Տ Ա Ի Ա Ր Ա Խ Տ.



Մուսիկ փուսիկ տաւարախտն եկաւ,
Հայ ու թուրք գիւղեր մի ալը
տուաւ,

Այստեղ մի գոմէշ, այնտեղ եր-
կու կով

Տապալեց յանկարծ ու անհետա-
ցաւ:

Ազատ շունչ քաշեց ռաշպար գիւղացին,
Կարծելով պրծաւ այս պատուհասից,
Բայց գարնան մօտեր, գործի սկզբում
Դարձեալ սուս ու փուս երևաց նորից:

Խեղդեց, խեղդոտեց գիւղացու տաւար,
Առաջն առնելու չկար ոչ մի ճար:
Սոսկաց գիւղացին, յուսահատ գոչեց,
Ա՛խ, տէր իմ Աստուած, իմ տունը քանդուեց:

Այո, քանդուեցաւ գիւղացու տունը,
Նա չունէր լծկան իր վարն անելու,
Նա չունէր կթան, որ կաթ տար իրեն,
Չունէր ոչ մի եզ սայլը լծելու:

Չկար իր Նէքեալ, Մարալն ու Մարջան,
Թաւար ու Թաւլան ու ժեղ գոմէշներ,
Չկար իր Պնդուկ, Շմօն ու Սոնան,
Գեղջուկի չարքաշ կեանքի ընկերներ:

Մնաց գութանը ժանգոտ վայր ընկած,
Հոծերն ու սամիք դէս ու դէն ցրուած,
Քաղցած ընտանիք հաց էր աղերսում,
Քաղցած երեխէք սովիցը տանջւում:

Ա՛խ, գուլում տարի, ասաց գեղջուկը,
Յուսահատ դիմեց գիւղի խոջային,
Եղած չեղածը նա գրաւ դրեց,
Որ մի կերպ անցնի այդ գուլում տարին:



Մ Ո Ր Ե Խ



արնան օրերին գեղջուկ երկրագործ
 Հինգ զոյգ լծկանով հերկել էր իր արտ,
 Աշնան սկզբին հողը շուռ տուել,
 Ունեցած սերմը հողին պահ տուել:
 Տափանել, ջրել, խաչ հանել վրան,
 Որ սերմը ծլի, արտը կանաչի,
 Հնձի ու փնջի, կալը հաւաքի,
 Որ թէ մի տարուայ կերը ունենայ,
 Թէ դիզուած պարտքը քիչ քիչ վճարի:
 Յոյսերով լցուած անցրել էր ձմեռը,
 Գարնան օրերին վերջապէս հասել,
 Տեսել էր ուրախ արտը կանաչած,
 Յօղունի վրայ հասկը կռացած:
 Նա ջերմ աղօթքով դիմել էր Աստծուն,
 Չար աչքից պահի իր արտը սիրուն,
 Ամեն շաբաթ իր արդար վաստակից
 Նա մոմ էր վառել սրբերի առաջ,
 Չոքէչոք ընկել մայր հողը պաշել,
 Որ այդ մայր հողը իր մուրազը տայ,
 Մէկին հինգպատիկ մասուլ ստանայ,
 Տան, դրսի հոգսից քիչ թեթեւանայ:

Բայց աւանդ բախտին, գարնան վերջերին
 Մի ձայն բարձրացաւ «մորեխ է գալիս,
 Այն էլ ի՞նչ մորեխ, անթիւ, անհամար,
 Մթնում էր օրը նրանց թռչելիս:
 Գիւղացին գլուխը կորցրեց երկիւղից,
 Աջեր ու խաչեր կանչեց օգնութիւն,
 Գիշեր ու ցերեկ աղօթքի կանգնեց,
 Որ հեռու տանի Տէրն այս փորձութիւն:
 Արտն է միակ իմ յոյսն ապաւէն,
 Նա է գեղջուկիս ցաւերին դարման,
 Իմ վիշտ, տրտմութիւն նա է փարատում,
 Իմ ամբողջ տունը նրան է նայում»:

Բայց երկինքն աւանջ չդրեց խեղճին,
 Մորեխն եկաւ անթիւ անհամար,
 Նստեց կանաչած արտերի վրայ,
 Խժռեց մի ծայրից, միւս ծայրով անցաւ,
 Աւեր թողնելով գնաց ու կորաւ...

Գեղջուկը կանգնած իր արտատեղում,
 Ձեռքերը խաչած, աչքերը գետնին,
 Գալոց օրերի պատկերն էր տեսնում,
 Մայր հողի վրայ արցունքներ թափում:



Մ Օ Ր Օ Ր Օ Ր Ը



Ննջիր, սիրուն իմ մանկիկ,
 Իմ աղաւնեակ, աչքիս լոյս,
 Քանի օրօր քեզ կերգեմ,
 Ննջիր մօրդ վերջին յոյս:

Քնիր, անմեղ իմ գառնուկ,
 Դու իմ սրտի մխիթար,
 Օրօր կերգեմ քեզ տխուր,
 Իսկ դու քնիր, շատ մի լար:

Գիտես քանի սև օրեր
 Բախտը բերեց քո խեղճ մօր,
 Ննջիր, որդեակդ իմ սիրուն,
 Քանի կասեմ քեզ օրօր:

Կգայ մի օր, երբ դու էլ
 Քո մօր վիշտը տեսնելով
 Նրա արցունքը կսրբես,
 Քո անուշակ խօսքերով:



ՄԻ ՊԱՏԿԵՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԿԵԱՆՔԻՑ

Ա.



արուն էր, տաքացել էին օրեր, բար-
 ձրը սարերի հալ ընկել ձիւներ, քըշ-
 քշան առուններ ու աղբիւրներ դաշտ ու ձոր
 բռնել: Կանաչել էր խոտը, ծաղիկներ ծաղ-
 կել և անուշ բուրմունք ամեն տեղ՝ սփռել:
 Մարդ և անասուն, թիթեռ ու թռչուն ուրախ
 ու գուարթ ամեն կողմ լցուել:

Մաճկալը հանդում իր վարն էր անում,
 նախրչին դադանակն ուսին՝ կով ու գոմշու-
 կին արօտը տանում, հորթարածը իր հոր-
 թերն առած, խոզարածն՝ իր խոզն ու գոջին,
 գառնարածը՝ փափիլիկ ու նախշուն գառներն
 առաջին, ինչպէս և հովիւր խուրճինը շալկած,
 բրդոտ ոչխարներ առաջը ձգած, «հի, հէ,
 հօ, հա» բարձր բղաւում, կանչում ու սու-
 լում և կանաչ խոտում արածացնում:

Իսկ մեր թռչնիկներ, բմբուտ հաւիկներ,
 ծիծեռնակ, սարեակ ու քաղցրիկ սոխակ, լոր

ու մշահաւ, արտուտ ու կաքաւ, սիրուն ճըվ-
վոցով, անուշիկ երգով, թփից ծառ թռչում,
ծառից դէպ ծաղկունք, ամենի սիրտը իրենց
են գրաւում...

Բայց այն թիթեռներ, նախշուն բզեզներ,
որ խոտերի մէջ վեր վար են ցատկում, բըզ-
զում ու տղզում ու յանկարծ խոտից մի այլ
տեղ թռչում, դռդռան ձայնով թռչնոց եր-
գերի դամբ լաւ պահում, ինչքան քաղցրու-
թիւն են մեզ պատճառում...

Բայց այս դեռ ոչինչ. ահա կէսօր է.
արևը վերևից կրակ է թափում, բաց դաշ-
տավայրից ամենքին քշում դէպ խոր խոր
ձորեր և կամ տերևոտ ու զով անտառներ:

Հանդն ու արօտ պահ մի լռեցին, թռչ-
կան հիւրերից շուտով զրկուեցին, միայն դեռ
հովտում, քչքչան առուի վշտոցն է լսում:
Ահա մեր մաճկալը իր մաճը թողեց, եզների
վզից սամիքն արձակեց, հոտաղ ու մշակ
իր շուրջը առած, թանէ սպասը մէջտեղը
դրեց...

Կերէք, տղերք ջան, ձեր ջանին դուրբան,
այսօր լաւ օր է, աջուկ է մեր բան:



Բ



այց ահա հովտում մի ձայն է լրս-
ւում. լուռ կացէք, այդ հովիւն է
իր սրինգը փչում, բրդոտ ոչխարներ ջրելու
տանում: Ահա ոչխարի տուտը երևաց, գլուխ-
ները քարշ՝ գնում են գնում, մի մի բառա-
չում, կամ թէ խոտ կծում ու սաստիկ տա-
քից հազիւ հազ քայլում: Վերջապէս հասան
առուի ափին, գլխներն իսկոյն ամենքը մեկ-
նեցին ու պաղուկ ջուրը անուշ փսսոցով
իրենց քաշեցին: Սրանք էզերն են, բայց ուր
են գառներ, սրանց զաւակներ: Նրանք քիչ
հեռու մի բլրի վրայ խոտ են արածում,

գլուխները ծռում, դէս ու դէն նայում, անուշ մայիլենով կանչում, բղաւում: Եւ ահա հասաւ կթելու ժամը. ոչխարը նստած տեղից վեր կացաւ. իսկ բլրից գառները խունջիկ ու մունջիկ առուի մօտ եկան... մայրը գառնուկին, գառը մայրիկին պտուում որոնում է հարիւրի միջին... բառաչ ու մայիլն ու իրարանցում շարժում են ամենքի սիրտն ու հոգին...

Տէս, ահա ձայնով գտան մէկ մէկու. լռիկ ու մնջիկ կանգնեց մեր մաքին. գառնուկը առջի երկու ոտքը ճկեց և մօր ստինքներն իր բերանը քաշեց. անուշ մշտցով ծծում է ծծում, իր փոքրիկ դնչով մօր կրծքին խփում, երբեմն էլ մօր ծիծը ատամների տակ ձգում ու կծում և խիստ ցաւեցնում, բայց ներող մայրը իր լեզուն հանած սիրուն զաւակի դնչիկն է լիզում ու մեծ հրճուանքով նրան գուրգուրում...

Անցաւ մի րոպէ. ահա կովկիթներ, կաւէ պտուկներ շրջ՝ իսկ ու թրճ՝ իսկ մէջտեղ շարուեցան, և հարս ու աղջիկ ձեռքերնին ծալած՝ հովիւների հետ կթել սկսան. խրժ-բրժ, խրժ-բրժ, լսւում են ձայներ, փրր-

փրուն կաթով լցւում ամաններ, իսկ մեր հեզ մաքին միամիտ կանգնած է տիրոջ առաջին, որ ագահ խլում է զաւակի բաժինն...

Երբ վերջացրին, հովիւներն իսկոյն մօրը իր որդուց նորից բաժնեցին, առաջուայ կարգով արօտ քշեցին...



Կ Ա Ր Կ Ո Ի Տ

Ա.



յն ի՞նչ ամպ է, որ սարի տակից, գալով գալիս է ու իրա ետքից՝ կարծես շղթայած քաշում է բերում մեծ ու սև ամպեր, ամեն տեղ փռում...

Մի րոպէ ևս՝ խորին մթութիւն ամեն ինչ պատեց. որոտաց երկինք, երկիր գղր-

դաց. փայլակն ու կայծակ իրարու խառնուած, մարդկանց սրտերը ահ ու դող ձգեց:

Մոնչաց քամին, շարժուեցին ծառեր. կաթեց, կաթկաթեց, յորդ անձրև թափուեց, անձրևի ետքից սառցէ գնդակներ, չրճիկ ու շրճիկ երկիր գլորուեցին: Թափուում է թափուում, սար ու ձոր ծածկում, ոչ դաշտ է հարցնում, ոչ այգի խնայում:

«Ախ կարկոտ, կարկոտ, կանչում են մարդիկ,

Այս ի՞նչ պատիժ է, խնայիր երկինք...»

Բ



աղարեց կարկուտը. որոտը լռեց, ամպերի ճեղքից արևը նայեց. երկիրը ժպտաց, նորից փայլ առաւ, բայց տխուր փայլ էր որ նա ստացաւ:

Այգեպանը վազեց իր այգին մտաւ, դէս ու դէն նայեց, մնաց քարացած: Ծառերը տերևաթափ, ճիւղերը կոտրտուած, բոլոր պտուղները կարկտահար եղած. «վա՛յ իմ աշխատանք, ափսոս իմ այգի», ասաց, հեռացաւ աչքերը լցուած...»

Արտատէրը գնաց իր արտը հասաւ. թուլացան ոտները, սևացան աչքեր, երբ տեսաւ հասկը ջարդուած փշրուած, հողին հաւասար, անգուլթ հեղեղից ավազով ծածկուած. «Կորաւ իմ յոյսը, փչացաւ իմ արտ», ասաց ու գնաց սիրտը մորմոքած...

Դրսում մնացած հաւքերն էլ թռան, գտան իրանց բուն, բայց ան, ի՞նչ տեսան. բունը աւերուած, ձագուկներն ընկած, չորսից միայն մին ողջ էր մնացած. իսկ այն միւսները թափուած ցեխի մէջ, անշունչ ընկել են, աչքները փակել, որի գլուխը, որի թևիկը կարկտից ջարդուել:

Ճլվլաց թռչունը, սգաց իր ձագուկ.

Դէս ու դէն ընկաւ, արեց ողբ ու սուգ...

Այսպէս ամեն տեղ, ուր մի ժամ առաջ Տիրում էր յոյս, կեանք, ցնծութիւն անբաւ,

Այժմ յաջորդեց կարկտի շնորհիւ Յուսահատութիւն, տառապանք ու ցաւ...



ԻՄ ՊԱՆՈՐԱՄԸ

Ա.



հա սկսուում է ամառը սարում:

Տեսէք այս սարեր կանաչով պատած,
այստեղ ու այնտեղ վրաններ խփած, վրանի
գիմաց հայ, թուրք գիւղական մի մի գործ
ձեռին բանի է նստած, որը տաշում է, որը
սրում է, որը կար կարում, երեխային օրո-
րում, որը հաց թխում կամ կաթ տաքացնում,
կարագ ու պանիր, մածուն պատրաստում:

Ահա քիչ հեռու նրանց տաւարը, ոչխարի
հօտեր, ձիանց բուրուկներ, մինչև փորի տակ
խոտերում ծածկուած կամ գլգլան ջրի ափը
հաւաքուած, տկզած կանգնել են, չեն շարժ-
ւում տեղից, բոլորը կուշտ են ու գոհ վի-
ճակից:

Իսկ գիտէք ո՞վ է մոթալ փափախով
Հաստավիղ մարդը իր դագանակով,
Որ աչքը տնկած սարի լանջերին
Մի բան է երգում շատ գիլ ձայնով:

Դա է նախրապանը՝ տէրը տաւարի,
Որ սար է գալիս ամենայն տարի:

Բ.

Ահա նոյն նախիր, նոյն հօտն ու ձիեր,
բայց ոչ թէ ամառը սարի խոտերում և ոչ
քչքչան ջրի ափերին, այլ ցուրտ ձմեռը գիւ-
ղի գոմերում:

Հալուել է միսը, ոսկրներ ցցուել,
Տկզած փորերը մէջքներին կպել,
Քաղցած է տաւարը, խոտ չկայ տալու,
Սառել են դաշտեր, գարունն է հեռու:
Կրծում են սովից մսուրի փայտեր,
Դոփում կճղակով, պլըշում աչեր,
Մայում, բառաշում, վիզները ծռում,
Թուլացած ընկնում, քաղցից սատակում:

Գ.

Ահա ձեզ այժմ մի ուրիշ պատկեր.

«Գարնան սկզբում գիւղացու յոյսեր»:

Գարնուն է, գարնուն, ի՞նչ քաղցրիկ անուն:
Արտերը կանաչել են, ծառերը ծաղկել, ծաղ-
կունքը բացուել, ջրերը բարձրացել, գեղջուկ
մշակը յոյսերով լցուել:

Կգայ ամառը, կղեղնի ցորեն, հունձը կը-
հնձի, կժողվի ամբար, կհասնի պտուղ, թափ
կտայ ծառերը, կլցնի քթոց, կկախի շարեր:
Խոտ կայ ձիերին, դարման տաւարին,
Ծաղկունք՝ մեղուին, մեղր՝ մանուկներին:

Պ.

Պատկերը փոխուեց:

Ահա նոյն գեղջուկն ամառ ժամանակ
տխուր նստած է իրեն յարկի տակ. ուր է
նրա յոյս իր արտն ու այգին, ինչո՞ւ է ժան-
գոտ մանգաղ գերանդին.

Մորեխը եկաւ, արտերը կերաւ,
Մորեխից պրծածը, կարկուտը տարաւ.
Թրթուռը խժուեց ծառերի տերև,
Պտուղ չմնաց՝ ողջ այրեց արև:
Սոված մեղուները թռան փեթակից,
Բճիճը մնաց զուրկ ծորան մեղրից,
Դաշտը չորացաւ՝ խոտ չկայ կովին,
Ամբարն է դատարկ, մահ է գեղջուկին:

Վ Ե Ր Ձ:




ՀՀ Ազգային գրադարան



NL0408228

Վանատուում է Ա. Անարոնեանի «Արցունքի հովիտ» գիրք 35 կ.:

Տպագրում են՝ Վ. Փափագեանի «Երկերի ժողովածուն»,
 Ա. վարդապետ Ամասունու «Հայոց բառ ու բան»
 (նիրքեր աշխարհիկ բառարանի համար):
 Դիլկենսի «Դաւիթ Կոպպերֆիլդ», քարզմ. Ա. Մելիք-
 Զհանեանցի:
 Յ. Թումանեանի «Բանաստեղծություններ»:



Դիմել՝ Баку, Совѣтъ съѣзда Е. Ф. Тагіаносянъ.